


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Չ Ե Կ ՈՒ Յ Ց
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2009

Հասցե՝	0010, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, թիվ 3
Էլեկտրոնային փոստ՝	info@armstat.am
ՀՀ ԱՎԾ կայքէջ՝	http://www.armstat.am ,
Հայելային կայքէջ՝	http://www.armstat.info
Ֆաքս՝	(+ 374 10) 52-19-21
Հեռախոս՝	(+ 374 10) 52 33 56

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2009

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության 3 մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները, խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին:

Բովանդակություն

Բովանդակություն.....	4
Ներածություն	5
Վիճակագրությունը և հանրությունը.....	6
Վիճակագրական տեղեկատվություն սպառողները (օգտագործողները)	9
Հետազոտության նպատակը.....	12
Ընդհանուր արդյունքները.....	13
Հիմնախնդիրներ.....	32
Առաջարկություններ.....	33
Եզրակացություններ.....	34
Հավելված	36
«Վիճակագրական տեղեկատվություն, տվյալների տարածում (վիճակագրական տեղեկատվություն սպառողների վերաբերմունքի, ակնկալիքների և պահանջմունքների, ուսումնասիրություն)» հարցաթերթը	




Արդի աշխարհում տեղի ունեցող համընդհանուր գրքալիզացիայի, շուկաների միջազգայնացման և տեղեկատվական հասարակության ձևավորման գործընթացների ինտենսիվացման պայմաններում, տեղեկատվությունը վերածվում է ամենաթանկ ապրանքի, ինչն ինքնին ենթադրում է առավել թանկարժեք տեղեկատվություն թողարկող վիճակագրական համակարգի համար զարգացման առաջանցիկ տեմպեր ապահովելու անհրաժեշտությունը:

Պետական վիճակագրության ոլորտում որդեգրված ռազմավարությունը խարսխված է ազատական տնտեսակարգի կառուցման և ժողովրդավարության սկզբունքների ծավալման քաղաքականության իրագործման հիմունքներին:

Այդ առումով շարունակվում է վիճակագրության վերափոխումը: **Վիճակագրությունն** անհրաժեշտ է տեղեկատվական հասարակության բոլոր տարրերին՝ գործառույթներ իրականացնող մարմիններին, հասարակական և միջազգային կազմակերպություններին, տնտեսավարող սուբյեկտներին, գիտակրթական շրջաններին, զանգվածային լրատվամիջոցներին, և ընդհանրապես, հասարակության լայն շրջաններին:

Վերոհիշյալ նկատառումներով պայմանավորված, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվության նկատմամբ սպառողների (օգտագործողների) հետ մշտական կապն ապահովելու, նրանց վերաբերմունքի, ակնկալիքների և պահանջմունքների ուսումնասիրության նպատակով, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (հետայսու՝ ՀՀ ԱՎԾ) մշտապես իրականացնում է մարկեթինգային հետազոտություն վիճակագրական տեղեկատվություն սպառողների շրջանում, որի արդյունքում պարբերաբար հստակեցվում են վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջմունքներն ու վիճակագրական աշխատանքների ցանկը:

ՀՀ ԱՎԾ-ն ընտրանքային հետազոտության համար կազմել է վիճակագրական հարցաթերթ՝ ակնկալելով ստանալ 10 անկաշկանդ պատասխաններ, որոնք կնպաստեն ՀՀ ԱՎԾ գործունեության հետագա առաջընթացին, մասնավորապես վիճակագրության մատուցման որակի հետագա բարելավմանը: Հետազոտության արդյունքներն ամփոփված են սույն զեկույցում:



«Վիճակագրություն» տերմինը ծագել է լատինական «status» բառից, որը նշանակում է երևույթի վիճակ, դրություն: Այս տերմինը միանշանակ չէ: Նախ և առաջ, «վիճակագրություն» նշանակում է հասարակական կյանքի քանակական տարբեր կողմերը (արտադրություն, արդյունքի բաշխում և փոխանակում, քաղաքականություն, մշակույթ, առողջապահություն, բնակչության կենսամակարդակ և այլն) բնութագրող ամփոփ ցուցանիշների ամբողջություն:

«Վիճակագրություն» նշանակում է նաև համապատասխան տվյալների հավաքագրման և ընդհանրացման գործընթաց: Այն գիտություն է, որն արտացոլում է երևույթների «վիճակների նկարագրությունը (փաստումը)»՝ թվային տվյալներով:


Վիճակագրությունը բնութագրվում է մյուս ոլորտների համեմատ առաջանցիկ զարգացմամբ, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման մեթոդաբանության մշտական կատարելագործման անհրաժեշտությամբ, երկրի տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, բնապահպանական ցուցանիշները բովանդակող տեղեկատվության նկատմամբ պահանջարկի մշտական աճով:

Պետական վիճակագրությունը պետական վիճակագրություն իրականացնող մարմնի՝ ՀՀ ԱՎՃ, գործունեությունն է՝ ուղղված սոցիալ-տնտեսական, հասարակական երևույթների և գործընթացների որակական և քանակական հարաբերությունների ժամանակի և տարածության որոշակի պայմաններում դրսևորվող օրինաչափությունների թվային բնութագրմանը: Ազատական տնտեսակարգի պայմաններում պաշտոնական վիճակագրության դերը ողջ հասարակությանը տեղեկատվություն մատակարարելն է և վարչական տեղեկատվության օգտագործելը:

Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներն են.

(ընդունված ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի 47-րդ նստաշրջանում՝ Ժնև, 15.04.1992թ. և ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի կողմից՝ 14.04.94թ)

1. Նշանակալիություն, օբյեկտիվություն և մատչելիություն
2. Պրոֆեսիոնալ ստանդարտներ և էթիկա
3. Հաշվետվություն և թափանցիկություն
4. Միսալ օգտագործման կանխում
5. Պաշտոնական վիճակագրության աղբյուրներ
6. Գաղտնիություն
7. Օրենսդրություն
8. Ազգային համակարգում
9. Միջազգային ստանդարտների օգտագործում
10. Միջազգային համագործակցություն



Եվրոպական վիճակագրության նորմերի կողքսով սահմանված սկզբունքները

(ընդունված վիճակագրական ծրագրային կոմիտեի կողմից՝ 24.02.2005թ.)

1. Մասնագիտական անկախություն
2. Տվյալների հավաքագրման իրավասություն
3. Ռեսուրսների բավարարվածություն
4. Որակի ապահովման պարտավորություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անաչառություն և Օբյեկտիվություն
7. Մեթոդաբանության հիմնավորվածություն
8. Վիճակագրական գործընթացների հիմնավորվածություն
9. Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածության չափավորություն
10. Արդյունավետություն
11. Արդիականություն
12. Ճշգրտություն և Հուսալիություն
13. Յուրաժամանակություն և Ծշտապահություն
14. Փոխկապակցություն և Համադրելիություն
15. Մատչելիություն և Պարզություն



«Եվրամիության և համագործակցության անդամ երկրների վիճակագրական մարմինների անկախության, անբողջականության և հաշվետու լինելու մասին» հանձնաժողովի կոմունիկատը Եվրամիության Պառլամենտին և Խորհրդին, Բրյուսել, 25.05.2005թ.

Պետական վիճակագրության իրագործման հիմքը **պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրն է**, որը մշակվում է **վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկի ուսումնասիրության հիման վրա**:

Ծրագրում ներառվում են նաև վիճակագրական տեղեկատվության սպառողների ցանկը, նրանց տրամադրվող տեղեկատվության կազմը և տրամադրման կարգը:

Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքներն են.

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը,
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին,
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը,
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը:

Հարկ է նշել, որ վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողների (օգտագործողների) **շրջանակը միշտ էլ շարունակական աճելու միտումներ ունի**:

Արդի տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել սպառողների ցանկացած պահանջմունք: Սակայն այդ բնագավառում ՀՀ ԱՎԾ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) իրական սահմանափակումների բարդությին:

Վիճակագրության կարևորագույն նպատակներից է **սպառողներին (օգտագործողներին)** իրենց պահանջարկին համապատասխանող վիճակագրական արտադրանք տրամադրելը:

Վիճակագրության կատարելագործման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումն է:

Որպես հանրային շահ հետապնդող մարմին, ՀՀ ԱՎԾ-ն **վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների)** ցանկը չի սահմանափակում:

Երկրի ազատական տնտեսակարգին անցման պայմաններում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումները, տնտեսությունում իրականացվող արագ տեղաշարժերը սկզբունքային անհրաժեշտություն են առաջացնում **վիճակագրական տեղեկատվության սպառողներին** ապահովելու ճշգրիտ, արժանահավատ և արդի չափանիշներին համապատասխանող վիճակագրական տեղեկատվությամբ, որը հնարավոր է իրականացնել միայն նրանց պահանջարկի **ուսումնասիրության**, վիճակագրության միջազգային նորմերին համապատասխանող տարողունակ, վստահություն վայելող տեղեկատվական բազայի վարման հիման վրա: Այս ամենի ապահովումն ենթադրում է տվյալների **հավաստիություն, դիտարկման դաշտի ամբողջական ընդգրկվածություն, օպերատիվություն:**





ՀՀ ԱՎԾ առաքելությունն է հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:

Տվյալների որակը, սպառողների վստահությունը և պրոֆեսիոնալ անկախությունը կան և կմնան ՀՀ ԱՎԾ նախապատվալին խնդիրները:

Վիճակագրական տվյալների տարածումը ներառում է բազմաբնույթ խնդիրների կատարում՝ վիճակագրական հրապարակումների տարածում, ինչպես նաև դրանց էլեկտրոնային կրիչներով կամ էլեկտրոնային փոստով տրամադրում: ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվությունը հասանելի է՝ ինտերնետի և բաց գրադարանի միջոցով, որտեղ առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր հրապարակումները:

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ կայքէջի կատարելագործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: 1999թ.-ից գործող ՀՀ ԱՎԾ կայքէջին վիճակագրական տեղեկատվություն սպառողները դիմել են մոտ 445800 անգամ, միայն 2008թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ ինտերնետային հանգույց այցելել են 114000 անգամ կամ 22.6%-ով ավելի 2007թ. համապատասխան ցուցանիշից: 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ ԱՎԾ ինտերնետային հանգույց օրական միջինն այցելել են մոտ 350 անգամ կամ 9 ամսվա ընթացքում՝ մոտ 96000 անգամ:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելն առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվությունների շրջանակն ընդլայնելու նպատակով, ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի արդիականացման ուղղությամբ դեռևս 2006թ.-ին մշակված ծրագրերի հիման վրա, ինչպես նաև Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցության վիճակագրական կարողությունների զարգացման ծրագրի փորձագետների օգնությամբ, 2007թ. մշակվեց նոր ինտերնետային կայքէջի ստեղծման տեխնոլոգիան և ծրագրային ապահովումը: 2008թ. մայիսի 1-ից շահագործվել է նոր կայքէջը և դարձել ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայք: Ի լրումն առկա բաժինների, նոր կայքը համարվել է նաև նոր բաժիններով (օրինակ՝ «Հայաստանի

Հազարամյակի զարգացման նպատակներ», Կայքի քարտեզ, «Միջազգային համագործակցություն» և այլն): Ներկայումս վիճակագրական հրապարակումները ներկայացվել են «ըստ թեմայի», «ըստ տարիների» և «ըստ տեսակի»:

Ներդրվել է մակրոտնտեսական ցուցանիշների տվյալների բազա՝ ժամանակագրական շարքերով (թարմացումը տեղի է ունենում ամսական պարբերականությամբ) և հնարավոր է դարձել հիմնական ցուցանիշների շարքերը ներկայացնել ցանկացած ժամանակահատվածի համար՝ սկսած 2000թ.-ից: Տվյալների բազան շարունակաբար համալրվում է՝ ի հաշիվ նոր ցուցանիշների ներմուծման:

Մշակվել է կայքէջում գրանցվելու հնարավորություն, որը վիճակագրական տեղեկատվության սպառողներին հետագայում հնարավորություն կընձեռի նախապես նշել այն հրապարակումների ցանկը, որոնք ցանկալի է ստանալ էլեկտրոնային փոստով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն տրամադրողները հետագայում կարող են պետական վիճակագրական հաշվետվությունների լրացված ձևերը ՀՀ ԱՎԾ հանձնել՝ անմիջապես կայքում էլեկտրոնային եղանակով լրացնելու միջոցով:


Նոր կայքի շահագործման արդյունքում արմատապես ձևափոխվել է գրադարանի էջը՝ ստեղծվել է «Գրադարան» տվյալների բազան մոտ 9500 գրքերի անվանումներով և ստեղծվել է փնտրման հնարավորություն՝ ըստ վերջինիս տեսակի, թեմայի և հրապարակման տարեթվի:

Կայքի գլխավոր էջում տեղադրվում են բոլոր վերջին հրապարակումները (պահի դրությամբ)՝ «Վիճակագրական հրապարակումների համացանկը», «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը, ինչպես նաև երկու նոր հրապարակումներ:

ՀՀ ԱՎԾ <http://www.armstat.am> կայքէջն էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխությունում, որը կայացել է 2008թ. դեկտեմբերի 26-ին՝ վերոհիշյալ մրցանակաբաշխության կազմկոմիտեի կողմից ստացել է ԱՌԱԶԻՆ ԿԱՐԳԻ ՄՐՅԱՆԱԿ:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2008թ. տարեվերջին առկա է եղել 9500 միավոր վիճակագրական գրականություն, որից 780-ը ստացվել է 2008թ. ընթացքում: Վիճակագրական գրականությունը համալրվել է աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (60%), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին (40%): ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ) և զեկույցներ) տեղադրվել են գրադարանում:

ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում 2008թ. ընթացքում գրանցվել է 410 այցելություն, այդ թվում գիտական՝ 10%, միջազգային կազմակերպություններից՝ 10%, գործառույթներ իրականացնող մարմիններից՝ 25% և կրթական ոլորտից՝ 55%: 2009թ. 9 ամիսների ընթացքում գրադարանում գրանցվել է 370 այցելություն:



Սկզբնական տեղեկություններ տրամադրողներ (Ռեսպոնդենտներ)

Տեղեկատվական հոսքերը և դրանց մասնակիցները
Սպառողներ



«Վիճակագրական սպառողներ» վիճակագրական հետազոտության նպատակը Հայաստանի Հանրապետությունում վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկի ուսումնասիրումն է և դրա հիման վրա պահանջարկի քվարարման հետագա բարելավումը:

Դրան հասնելու հիմնական ուղղություններից մեկը վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործումն է՝ բազմաբովանդակ և բազմաբնույթ նյութերի պատրաստումը, ժամանակի կարճ հատվածում վիճակագրական տեղեկատվության նկատմամբ սպառողի (օգտագործողի) ընթացիկ պահանջարկի հնարավորինս քվարարումը:

Վիճակագրական տեղեկատվության տարածումը ներառում է բազմաբնույթ խնդիրների կատարում՝ վիճակագրական հրապարակումների (տարեգրքեր, ժողովածուներ, տեղեկագրեր, զեկույցներ, մամուլի հաղորդագրություններ և այլն) տարածում, ինչպես նաև դրանց կոշտ կրիչներով կամ էլեկտրոնային փոստով տրամադրում:

Տվյալների արժանահավատության ապահովումը հնարավոր է «տեղեկատվություն տրամադրող-վիճակագիր» երկկողմանի փոխադարձ վստահության և հարգանքի վրա հիմնված հարաբերակցության դեպքում:

Տեղեկատվության օպերատիվության ապահովումն ենթադրում է սպառողներին պահանջվող որակի և ծավալի տեղեկատվության տրամադրում՝ սահմանված ժամկետներում, մշակված ձևով (թղթի վրա, մագնիսական կրիչներով, ինտերնետային կապով և այլն):

Արդի տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են ընձեռում հաշվի առնել տարբեր սպառողների ցանկացած տեղեկատվական պահանջմունք:

Սակայն այդ բնագավառում ՀՀ ԱՎԾ-ն, ինչպես և ցանկացած երկրի վիճակագրական ծառայություն, անխուսափելիորեն բախվում է ռեսուրսների (ֆինանսական, կադրային և այլն) ռեալ սահմանափակումների բարդությին:



2008թ. IV եռամսյակում և 2009թ. I - III եռամսյակների ընթացքում ՀՀ ԱՎԾ-ն վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) շրջանում իրականացրեց ընտրանքային հետազոտություն՝ «Վիճակագրական տեղեկատվություն, տվյալների տարածում (վիճակագրական տեղեկատվություն սպառողների վերաբերմունքի, ակնկալիքների և պահանջմունքների ուսումնասիրություն)» հարցաթերթով (տես՝ Հավելված):

ՀՀ ԱՎԾ-ն նախապես ուսումնասիրելով վիճակագրական տեղեկատվություն սպառողների կազմը և հաշվի առնելով առկա ռեսուրսների սահմանափակումները, հետազոտությունը սկսելուց առաջ հիմնական վիճակագրական սպառողների մեջ ընտրանք կատարեց և հետազոտության համար, որպես ընտրանք, ընտրվեցին այն սպառողները, որոնց հետ համագործակցությունը գրեթե ամենօրյա է և նրանց ընդգրկեց հարցաթերթի թղթային տարբերակներ լրացնելու գործընթացում:


Հետազոտության ընտրանքում ընդգրկված ներկայացուցիչների գերակշիռ մասը գործառույթներ իրականացնող մարմիններն էին (մասնավորապես՝ պետական և տարածքային կառավարման մարմիններ, տնտեսավարող սուբյեկտներ), մնացած մասը ներկայացնում էին հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանձնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունները, դատաիրավական մարմինների, բանկային համակարգի, Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական), գիտակրթական հաստատությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները, անհատ քաղաքացիներ և այլն:

Անկեղծ և թափանցիկ պատասխաններ ստանալու և հետազոտության ընտրանքն առավելագույնս ընդլայնելու ակնկալիքով հարցաթերթի էլեկտրոնային տարբերակը (հայերեն, ռուսերեն և անգլերեն) վիճակագրական սպառողներին հղված գրությամբ տեղադրվեց ՀՀ ԱՎԾ կայքէջի՝ <http://www.armstat.am> (հայելային կայքէջում նույնպես՝ <http://www.armstat.info>) գլխավոր էջում (տես՝ ՀՀ ԱՎԾ կայքէջի «Սկիզբ» ենթաբաժին):


Նույն ժամանակահատվածում հարցաթերթի օրինակներ տրամադրվեցին նաև ՀՀ ԱՎԾ բաց գրադարան այցելած բոլոր այցելուներին, որոնց կողմից լրացված պատասխանները ևս հաշվի առնվեցին հետազոտության նյութերն ամփոփելիս:

Հետազոտության արդյունքներն ամփոփվել են 2009թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ: Հարցաթերթերի պատասխան - արձագանք ստացվել են լրացնողների 46.0%-ից: Հետազոտության հարցաթերթը պարունակում է 10 հարց: Ստորև ներկայացվում են հետազոտության հարցաթերթի պատասխանների արդյունքները:

Հետազոտության ընտրանքում ընդգրկված վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբավորումները




Հետազոտությանը մասնակցած (ներառյալ՝ ՀՀ ԱՎԾ կայքէջի, բաց գրադարանի) վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբավորումները



Հարց 1.


«Դուք հանդիսանո՞ւմ եք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տեղեկատվության սպառող (օգտագործող)»:

Հարցաթերթը լրացնողների 88.7%-ի մոտ այս հարցին պատասխանները եղել են դրական, այսինքն նրանք հանդիսանում են վիճակագրական տեղեկատվություն սպառող, իսկ 11.3%-ը բացասական պատասխան է տվել, գտնելով, որ այնուամենայնիվ իրեն «սպառող չի համարում»:



Վիճակագրական տեղեկատվություն սպառողները

(ըստ սպառողների խմբերի, տոկոսներով՝ ստացված պատասխաններից)



Հարց 2.

«Ինչպե՞ս, ո՞ր աղբյուրից եք ստանում (ձեռք բերում) վիճակագրական տեղեկատվությունը (փոստ, էլեկտրոնային փոստ, Ինտերնետ, հաճախում ծառայության գրադարան, հանդիպումներ, մամուլի ասուլիսներ, այլ)»:

Այս հարցը լրացնելիս սպառողները, հիմնականում, նշել են տեղեկատվության ստացման մի քանի աղբյուրներ: Ամփոփելով արդյունքները, պարզ է դառնում, որ սպառողները վիճակագրական տեղեկատվությունը ներքոհիշյալ աղբյուրներից ստանում են հետևյալ կերպ.

- փոստից՝ 10.5%-ը,
- էլեկտրոնային փոստից՝ 14.5%-ը,
- ինտերնետից՝ 39.2%-ը,
- գրադարանից՝ 30.6%-ը,
- հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում՝ 21.2%-ը,
- այլ (մազնիսական կրիչներ, ՀՀ ԱՎԾ մարզային (ք. Երևանի) մարզային գործակալությունների, դրանց տարածքային բաժինների գրադարաններ, ՀՀ ազգային գրադարան, մարզպետարանների (քաղաքապետարանների) գրադարաններ և այլն) աղբյուրներից՝ 34.9%-ը:

Վիճակագրական տեղեկատվության տարածումն ըստ սպառողների խմբերի և աղբյուրների

տոկոսով՝ ընդամենի նկատմամբ

	Փոստից	Էլեկտրոնային փոստից	ՀՀ ԱՎԾ կայքէջից	ՀՀ ԱՎԾ բաց գրադարան այցելություն	Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում	Այլ աղբյուրներից
Գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներ	53.8	40.7	26.0	28.0	31.6	37.7
Հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանձնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունների ներկայացուցիչներ	25.6	13.0	22.6	15.8	22.8	33.1
Գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ	15.4	38.9	43.8	44.7	40.5	23.8
Բանկային համակարգի ներկայացուցիչներ	2.6	5.6	0.7	3.5	2.5	0.8


	Փոստից	Էլեկտրոնային փոստից	ՀՀ ԱՎԾ կայքէջից	ՀՀ ԱՎԾ բաց գրադարան այցելություն	Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում	Այլ աղբյուրներից
Չանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ	-	-	3.4	4.4	-	3.8
Դատախրավական մարմինների ներկայացուցիչներ	2.6	1.8	1.4	1.8	-	-
Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) կազմակերպությունների ներկայացուցիչներ	-	-	2.1	1.8	2.6	0.8
Ընդամենը վիճակագրական տեղեկատվության սպառողներ	100	100	100	100	100	100

Հարկ է նշել, որ **գործառույթներ իրականացնող մարմինների** ներկայացուցիչները որպես վիճակագրական տեղեկատվության աղբյուր, հիմնականում, համարում են փոստը և էլեկտրոնային փոստը, **հասարակական և այլ կազմակերպությունների** ներկայացուցիչները, համապատասխանաբար՝ այլ աղբյուրները (մագնիսական կրիչներ, ՀՀ ԱՎԾ մարզային (ք. Երևանի) մարզային գործակալությունների, դրանց տարածքային բաժինների գրադարաններ, ՀՀ ազգային գրադարան, մարզպետարանների (քաղաքապետարանների) գրադարաններ և այլն) և փոստը, **գիտակրթական հաստատությունների** ներկայացուցիչները՝ ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը և կայքէջը, **զանգվածային լրատվամիջոցների** ներկայացուցիչները՝ ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը և այլ աղբյուրները, **բանկային համակարգի ներկայացուցիչները**՝ էլեկտրոնային փոստը և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը, **դատախրավական մարմինների** ներկայացուցիչները՝ փոստը, էլեկտրոնային փոստն ու ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները՝ հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում ստացված տեղեկատվությունը և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանը:

Այսպես.


Փոստի միջոցով առաքվող վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողներ հանդիսանում են գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (53.8%), հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանձնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունների (25.6%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (15.4%): Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) կազմակերպությունների և լանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները հաղորդակցման այս միջոցը չեն նախընտրում:

Փոստից օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը




Վիճակագրական տեղեկատվությունն **էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փոստ, մագնիսական կրիչներ)** օգտագործողների գերակշիռ հատվածը գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներն են (40.7%), հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանճնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունների (25.6%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները: Կապի այս միջոցը նույնպես նախընտրելի չէ սպառողների վերոհիշյալ նույն խմբերին:

էլեկտրոնային եղանակից օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը




ՀՀ ԱՎԾ կայքէջից օգտվողների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (43.8%), գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (26.0%) և հասարակական ու այլ կազմակերպությունների (22.6%):

ՀՀ ԱՎԾ կայքէջից օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը




ՀՀ ԱՎԾ բաց գրադարանից օգտվողների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (44.7%), գործառույթներ իրականացնող մարմինների (28.0%) և հասարակական ու այլ կազմակերպությունների (15.8%) ներկայացուցիչները:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանից օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը




Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում վիճակագրական տեղեկատվությունից օգտվում են. գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները՝ 40.5%, գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները՝ 31.6% և հասարակական ու այլ կազմակերպությունները՝ 22.8%:

Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը



Այլ աղբյուրներից օգտվող վիճակագրական սպառողների խմբերի մեջ առավել ակտիվ են գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (37.7%), հասարակական ու այլ կազմակերպությունների (33.1%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (23.8%):

Այլ աղբյուրներից օգտվող վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերի բաշխվածությունը




Հարց 3.

«Ձեզ բավարարում է արդյոք վիճակագրական հրապարակումների արտաքին տեսքը, բովանդակությունը» հարցին՝ 98.9%-ն տվել է դրական պատասխան:

Որքանով է բավարարում վիճակագրական հրապարակումների արտաքին տեսքը, բովանդակությունը

%



Սպառողների խմբերը


- 1 գործառույթներ իրականացնող մարմիններ
- 2 հասարակական և այլ կազմակերպություններ
- 3 դատաիրավական մարմիններ
- 4 բանկային համակարգ
- 5 ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 6 գիտական հաստատություններ
- 7 զանգվածային լրատվամիջոցներ

Հարց 4.

«Դուք օգտագործո՞ւմ եք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տեղեկատվությունը» հարցին դրական է պատասխանել հարցվողների 94.6%-ը:

Մասնավորապես «**ինչպե՞ս կամ որտե՞ղ եք այն կիրառում**» ենթահարցին հարցվողները հիմնականում պատասխանել են, որ ստացված վիճակագրական տեղեկատվությունն օգտագործվում է լրատվության, գիտական (գիտական հոդվածներում, դասախոսությունների համար) ու կրթական (դիպլոմային, կուրսային) աշխատանքներում, ու տնտեսական ուսումնասիրությունների և վերլուծությունների համար, տարաբնույթ հաշվետվություններում, միջազգային համագործակցության ասպարեզում, գրադարանային գործունեության մեջ, անձնական նկատառումներով, տրանսպորտի ոլորտում, ծրագրեր մշակելիս, վերահսկողության դիտարկման ընթացքում, քաղաքականություն մշակելիս, վարչական վարույթների ընթացքում, կարգավորող անձանց լիցենզավորված գործունեության ուսումնասիրման ընթացքում, բանկային համակարգում և այլն:

Սպառողների վերաբերմունքը վիճակագրական տեղեկատվություն կիրառման տեսանկյունից



Հարց 5.

«Վիճակագրության ո՞ր մասն է (հատվածը) հատկապես Ձեզ հետաքրքրում»

հարցը մանրամասնված է, քանզի ՀՀ ԱՎԾ-ի համար էական է, թե վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործորդների) շրջանում սոցիալ-տնտեսական ո՞ր հատվածի (քննազավառ, ոլորտ կամ գույց այլ) վերաբերյալ տեղեկատվությունն է առավել անհրաժեշտ ու գործածական: Հարցաթերթը լրացնողների պատասխանների արդյունքները հետևյալն են.

	Մակրո-տնտեսական ցուցանիշներ	Բնապահպանություն և բնօգտագործում	Բնակչություն, ժողովրդագրություն	Սոցիալական հատված	Վիճակագրական մեթոդաբանություն, տեղեկություններ տվյալների, դրանց ստացման և օգտագործման վերաբերյալ	Այլ
	ա/	բ/	գ/	դ /	ե/	զ/
Գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներ	32.4	43.4	38.2	37.8	28.9	25.0
Հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանճնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունների ներկայացուցիչներ	21.9	23.0	27.2	5.7	25.0	40.6
Գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ	37.7	27.0	26.4	48.7	37.5	18.8
Բանկային համակարգի ներկայացուցիչներ	2.4	1.6	1.6	1.7	3.8	6.3
Չանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ	3.6	2.5	4.5	3.5	3.8	9.3
Դատաիրավական մարմինների ներկայացուցիչներ	0.4	0.9	0.9	0.9	-	-
Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) կազմակերպությունների ներկայացուցիչներ	1.6	1.6	1.2	1.7	1.0	-
Ընդամենը վիճակագրական տեղեկատվության սպառողներ	100	100	100	100	100	100

Հարկ է նշել, որ **մակրոտնտեսական ցուցանիշների** կազմով հետաքրքրվող ամենամեծ լսարանը գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներն են (37.7%), ինչպես նաև գործառույթներ իրականացնող մարմինների (32.4%) և հասարակական և այլ կազմակերպությունների (21.9%) ներկայացուցիչները:

Բնապահպանության և բնօգտագործման ցուցանիշներով ավելի շատ հետաքրքրվում են գործառույթներ իրականացնող մարմինները (43.4%), գիտակրթական հաստատությունների (27.0%) և հասարակական ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչները (23.0%):


Վիճակագրության **«Բնակչություն և ժողովրդագրություն»** հատվածի ցուցանիշների սպառող մեծամասամբ հանդիսանում են գործառույթներ իրականացնող մարմինները (38.2%), հասարակական և այլ կազմակերպությունների (27.2%), ինչպես նաև գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (26.4%):

Սոցիալական հատվածի ցուցանիշներով հիմնականում հետաքրքրվում են գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (48.7%) և գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (37.8%):

Ինչ վերաբերում է **վիճակագրական մեթոդաբանությանը և մեթատվյալներին**, ապա հարկ է նշել, որ վիճակագրության այդ ոլորտով առավելագույնս հետաքրքրված են գիտակրթական հաստատությունների (37.5%) և գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (28.9%):

Այլ կարգի վիճակագրությամբ հետաքրքրված են հասարակական ու այլ կազմակերպությունների ներկայացուցիչները (40.6%), գործառույթներ իրականացնող մարմինների (25.0%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (18.8%):

Վիճակագրական տեղեկատվության սպառողների խմբերն ու նրանց կողմից նախընտրված վիճակագրության ուղղությունները



Սպառողների խմբերը

- 1 գործառույթներ իրականացնող մարմիններ
- 2 հասարակական և այլ կազմակերպություններ
- 3 դատախարակական մարմիններ
- 4 բանկային համակարգի ներակայացուցիչներ
- 5 ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 6 գիտական կազմակերպություններ
- 7 գանգվածային լրատվամիջոցներ

մակրոտնտեսական ցուցանիշներ ա
 բնապահպանություն և բնօգտագործում բ
 բնակչություն, ժողովրդագրություն գ
 սոցիալական հատված դ
 վիճակագրական մեթոդաբանություն, տեղեկություններ տվյալների, դրանց ստացման և ե
 օգտագործման վերաբերյալ ալլ
 զ

Հարց 6.

«Լրացուցիչ (ի հավելումն եղածի) ի՞նչ տեղեկատվություն կցանկանայիք տեսնել վիճակագրական հրապարակումներում» հարցին պատասխանելիս հիմնական շեշտը դրվել է.

- մարզերի սոցիալ-տնտեսական վիճակին,
- հետաքրքրաշարժ վիճակագրությանը,
- միջազգային համադրումներին (մասնավորապես՝ ԱՊՀ երկրների մակրոտնտեսական ցուցանիշներին՝ այլ երկրների (օրինակ ԱՊՀ անդամ) մակրոտնտեսական ցուցանիշներին՝ ՀՀ համանման ցուցանիշների հետ համադրելու նպատակով,
- արտագաղթի ճշգրտված տվյալներին,
- կանխատեսումներին,
- ՀՆԱ-ի սեզոնային համամասնությունների վերանայմանը,
- ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (ՏԳՏԴ) մշտական գներով ՀՆԱ-ի հաշվարկմանը (այդ հաշվարկներն իրականացնել առնվազն վերջին 8 տարիների կտրվածքով՝ 2000-2008թթ.),
- աշխատանքի արտադրողականությանը գյուղատնտեսությունում,
- զբաղվածների թվաքանակի, տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակի, աշխատավարձի ֆոնդի մանրամասնված հրապարակմանը,
- ըստ մարզերի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի վերաբերյալ ամսական տեղեկատվությանը,
- ՀՀ անշարժ գույքի գների ինդեքսի հաշվարկմանը,
- ՀՀ ֆինանսական հաշվի կազմմանը,
- գինվորական ոչ գաղտնի տվյալների հրապարակմանը,
- համասեռամուլների, միասեռամուլների, ադանդավորների թվաքանակներին,
- աշխատանքից հեռացվածների թվաքանակին (մասնավորապես՝ կաշառակերության պատճառով),
- սննդարդյունաբերական կազմակերպությունների կողմից բնեղեն և արժեքային արտահայտությամբ թողարկված արտադրանքի ծավալին:


Հարց 7.

«Հետազայում Դուք կցանկանայի՞ք վիճակագրական տեղեկատվությունը ստանալ (ձեռք բերել) փոստով, էլեկտրոնային փոստով, ինտերնետով, հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում և այլն), գրադարան հաճախելով, էլեկտրոնային կրիչներով» հարցին վիճակագրական տեղեկատվություն սպառողների տաբեր խմբեր տարբեր մոտեցումներ են դրսևորել: Այսպես.

	Փոստից	Էլեկտրոնային փոստից	ՀՀ ԱՎԾ կայքէջից	ՀՀ ԱՎԾ բաց գրադարանայցելություն	Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում	Այլ աղբյուրներից
	ա/	բ/	գ/	դ/	ե/	զ/
Գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչներ	43.8	41.1	36.4	39.3	26.7	32.6
Հասարակական և այլ (հիմնադրամներ, միություններ, խորհուրդներ, հանձնաժողովներ, ծառայություններ) կազմակերպությունների ներկայացուցիչներ	44.8	19.6	25.3	19.6	20.8	13.7
Գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ	5.8	32.7	34.6	33.3	43.6	44.2
Բանկային համակարգի ներկայացուցիչներ	1.1	0.9	1.4	1.0	2.0	2.1
Չանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ	2.3	3.9	1.8	2.9	3.9	5.3
Դատաիրավական մարմինների ներկայացուցիչներ	1.1	0.9	0.5	2.9	2.0	2.1
Հայաստանի Հանրապետությունում միջազգային (միջկառավարական, միջպետական) կազմակերպությունների ներկայացուցիչներ	1.1	0.9	-	1.0	1.0	-
Ընդամենը վիճակագրական տեղեկատվության սպառողներ	100	100	100	100	100	100

Փոստի միջոցով առաքվող վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողներ ցանկացել են մնալ հասարակական և այլ կազմակերպությունների (44.8%) և գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (43.8%), **Էլեկտրոնային փոստի միջոցով**, համապատասխանաբար՝ գործառույթներ իրականացնող մարմինների (41.1%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (32.7%), **ՀՀ ԱՎԾ կայքէջից և բաց գրադարանից** կշարունակեն տեղեկատվություն ստանալ գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ 36.4% և 39.2%) և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (34.6% և 33.3%), **հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում և այլ աղբյուրներից** կշարունակեն օգտվել գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչները (համապատասխանաբար՝ 43.6% և 44.2%) և գործառույթներ իրականացնող մարմինների ներկայացուցիչները (26.7% և 32.6%):

Վիճակագրական տեղեկատվություն ստանալու նախընտրելի աղբյուրները



Սպառողների խմբերը

- 1 գործառույթներ իրականացնող մարմիններ
- 2 հասարակական և այլ կազմակերպություններ
- 3 դատախիզական մարմիններ
- 4 բանկային համակարգ
- 5 ՀՀ-ում միջազգային և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ
- 6 գիտական կազմակերպություններ
- 7 գանգվածային լրատվամիջոցներ


փոստով	ա
էլեկտրոնային փոստով	բ
ՀՀ ԱՎԾ կայքէջով	գ
ՀՀ ԱՎԾ բաց գրադարան հաճախելով	դ
հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում	ե
այլ աղբյուրներով	զ

Հարց 8.


«Եթե վիճակագրական տեղեկատվությունը (բացի անվճար երաշխավորված պետական նվազագույնից) հետագայում Ձեզ մատուցվի վճարովի հիմունքներով, Դուք այն կգնե՞ք, և/կամ ո՞ր դեպքում պատրաստ կլինեք վճարել .

ա/մինչև 10 բույե մատուցված վիճակագրական ծառայությանը, բ/10 բույեից ավելի մատուցված վիճակագրական ծառայությանը, գ/ որոշակի ժամանակ պահանջող աշխատանքի դեպքում, դ/ տարբեր աղբյուրներից նյութը սինթեզելու դեպքում, ե/ստանդարտից տարբերվող, հատուկ պատվերով աշխատանքի դեպքում»

Հարցին **բացասական** պատասխան է տվել հարցվողների 22.8%-ը, իսկ 77.2%-ը՝ **դրական** պատասխան:



Վիճակագրական տեղեկատվության սպառողների վերաբերմունքն ըստ վճարովի հիմունքներով ծառայությունների մատուցման խմբավորումների




Հարց 9.

«Դուք կցանկանա՞յի՞ք մասնակցել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կազմակերպվող մամուլի ասուլիսներին, Ծառայության դահլիճում անցկացվող վիճակագրական սեմինարներին»

հարցին դրական պատասխան (անմիջական փոխհարաբերություններ) տվել են լրացնողների 73.9%-ը, իսկ բացասական՝ նրանց 26.1%-ը:


Վերջիններիս պատասխանը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, սակայն հիմնական պատճառը, թերևս, նրանց գտնվելու վայրն է (մարզերից) կամ էլ մասնակից դառնալու անհնարինությունը՝ ժամանակի և տարածության տեսանկյունից:



Հարց 10.

«Դուք կցանկանա՞յի՞ք այսուհետև ևս լինել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող նյութերի սպառող (օգտագործող)»

հարցին վիճակագրական տեղեկատվություն սպառողներից դրական են պատասխանել նրանց 97.8%-ը և միայն 2.2%-ը չի ցանկացել համագործակցել ՀՀ ԱՎԾ հետ:



Հարցաթերթում տեղ է հատկացված հետաքրքրող այլ հարցերի պարզաբանման համար: Թերևս, կարելի է առանձնակի կանգ առնել վիճակագրական տեղեկատվություն սպառողներից մի քանիսի նկատառումների վրա.

- պարբերաբար կազմակերպել վիճակագրական որևէ հատվածի վերաբերյալ տեղեկատվական սեմինարի անցկացում,
- պարբերաբար ճշգրտված տեղեկատվության հրապարակում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության գործունեության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության ընդլայնում,
- տեղական և օտարերկրյա ներդրումների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության մանրամասնված հրապարակում,
- վիճակագրական տեղեկատվություն բարձր տեխնոլոգիաների, ինտերնետի և համակարգիչներից օգտվողների վերաբերյալ տեղեկատվության մշակում,
- գիտատեխնիկական առաջադիմության, նոր հայրենական գյուտերի տարածման, գիտության արդյունքների ներդրման ծախսերի և այլնի վերաբերյալ լուսաբանում,
- ՀՀ անշարժ գույքի գների ինդեքսի հաշվարկում,
- ՀՀ ֆինանսական հաշվի կազմում,
- այլ:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ



Վիճակագրական տեղեկատվություն սպառողը, դեռևս, բավարար մակարդակով չի օգտագործում մատուցվող վիճակագրական տեղեկատվությունը, քանզի հիմնականում ոչ լիարժեք է նրա վիճակագրական ցուցանիշների և դրանց հաշվարկման մեթոդաբանության իմացությունը: Վերջինս հնարավոր է խորացնել «վիճակագիր-սպառող» փոխհարաբերությունը առավելագույնս ընդլայնելու միջոցով (հանդիպումների, մամուլի ասուլիսների, հրապարակումներում մեթոդաբանական պարզաբանումների մշտական գետեղումով և այլն):

Ինչո՞ւ է կարևոր վիճակագրական տարածումը և ինչո՞ւ է անհրաժեշտ ծրագրավորել դրանց կիրառումը: Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ միայն «**օգտագործվող**» վիճակագրական տեղեկատվությունն է հանդիսանում «**օգտակար վիճակագրական տեղեկատվություն**»:

ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված ողջ տեղեկատվությունը տեղադրվում է ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջում: Վերջինիս լայն կիրառումը հնարավորություն է ընձեռում ընդլայնել սպառողների շրջանակը, անցում կատարել տեղեկատվության տարածման թրթային տարբերակից էլեկտրոնայինին:

Կարևոր փուլ է գրադարանի ավտոմատացումը: Նախատեսվում է ներդնել հատուկ ծրագրեր, որոնց միջոցով հնարավոր կլինի ավտոմատացված կերպով օգտվել Ինտերնետի տեղեկատվությունից և ստանալ այն ցանկացած տեսքով: Օգտագործողը հնարավորություն կունենա ինքնուրույն աշխատել վիճակագրական տվյալների բազաների հետ:

Վիճակագրական տեղեկատվության մեջ երբեմն անհրաժեշտ է տվյալների ավելի մանրամասն ընդգրկում կամ պարբերականության ավելի հաճախականացում: **Վիճակագրական տեղեկատվությունը օգտագործողների համար պետք է մատչելի լինի:**

Ինչ վերաբերում է պաշտոնական վիճակագրության հանդեպ **վստահությանը**, տարածման քաղաքականությանը և փորձին, ապա հարկ է նշել, որ պետական վիճակագրության հանդեպ վստահությունը պետք է կենսական կարևոր նշանակություն ունենա գործառույթներ իրականացնող մարմինների համար: Նրանց կողմից վստահությունն ամրապնդելու համար անհրաժեշտ է բարելավել վիճակագրական ենթակառուցվածքները և հաղորդակցման հնարավորությունները: Չարգացնել և օժանդակել արդյունավետ փոխհարաբերությունն այն սպառողների հետ, որոնք կարծիք են ձևավորում:

Վիճակագրական արտադրանքի կազմի **նորացումը** և տվյալների որակի հետագա կատարելագործումը կընդլայնի սպառողների շրջանակը:

Ճանաչելով սպառողներին և նրանց խմբերին ու հուզող հարցերի շրջանակին, պարզ է դառնում, թե որքանով են նրանք բավարարված կամ դժգոհ այն ծառայություններից, որ մատուցում են վիճակագիրները: Բացի այդ, մենք չենք իմանա վիճակագրության ոլորտում առկա որևէ չբավարարված պահանջմունքների մասին և դժվար կլինի զարգացնել այն ծառայությունները, որոնք ավելի են համապատասխանում նրանց տեղեկատվական պահանջմունքներին: Խիստ կարևոր է, որ ներկայացվող վիճակագրական տվյալները լինեն հարմար օգտագործվող, այսինքն առկա լինի արդյունավետ հաղորդակցություն, տվյալների հիմնապաշարներից օգտվելու հարմարավետություն, վիճակագրական տվյալների հարմար ներկայացում, եզրակացություններ: Կարևոր են ծրագրային ապահովումների ճիշտ ընտրությունները, մատչելի ծրագրային միջոցների ապահովումը, մոնիթորինգը, մշտական կատարելագործումը, ամփոփումները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հետազոտության նյութերով կուտակված տեղեկատվությունը ծավալուն է, արդյունքում բազմաթիվ փոխադարձ դրական ազդակներ են հաղորդվել, հետաքրքիր առաջարկություններ և հարցեր առաջադրվել: Եվ վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) հետ այս եղանակով համագործակցության արդյունքում կուտակված նյութերն արձագանքը կգտնեն և կարտացոլվեն ՀՀ ԱՎԾ հետագա գործունեության մեջ:

Սպառողների շրջանում անցկացված այս հետազոտությունը կարևորվում է այն հանգամանքով, որ հնարավորություն է ընձեռել հաշվի առնել յուրաքանչյուր սպառողի կարծիքը և գնահատական տալ վիճակագրական հրապարակումների կատարելագործման գործընթացում:

Միաժամանակ, հարկ է նշել, որ վիճակագրական տեղեկատվության և արտադրանքի իրացման գործում առկա են ֆինանսական, տեխնիկական և տեխնոլոգիական դժվարություններ, սահմանափակումներ, որոնք լրջագույն արգելքներ են հրապարակային գործունեության հետագա կատարելագործման ճանապարհին:

Բացի վիճակագրական հրապարակումներից, առաջընթացի ներկա փուլում միջազգային փորձում մեծ արժեք են ներկայացնում վիճակագրական տեղեկատվության սպառողների կողմից ինտերնետային ցանցի միջոցով վիճակագրական տվյալների

բազաների ամենալայն կիրառումը, լազերային պնակիտներով հրապարակումների ձեռքբերումը:

Հետագա հրապարակումներում խնդիր է ծառայել խուսափել տեքստային հոգնեցուցիչ հատվածների փոխարեն կիրառել քարտեզներ, գրաֆիկներ, դիագրամներ:

Բացի վերը նշվածից, մեծ աշխատանքներ պետք է տարվեն հրապարակումներում միջազգային համադրումների վերաբերյալ հատվածներ զետեղելու ուղղությամբ:

Բոլոր հրապարակումներում ցանկալի է զետեղել տվյալների հավաքագրման, մշակման մեթոդաբանությունը, ինչը զգալիորեն կհեշտացնի տվյալների օգտագործումը:

Պաշտոնական հրապարակումների բովանդակության կատարելագործման նպատակով պետք է մշտապես զարգանա սպառողների հետ հետադարձ կապի համակարգը, որի շնորհիվ հետագայում կբավարարվի սպառողի պահանջարկը:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ տեղեկատվությունը, ինչպես ցանկացած ապրանք պետք է համապատասխանի քանական և որակական չափանիշների ամբողջական շարքի պահանջներին (բովանդակությունից մինչև տարածումը): Տեղեկատվության ավելի արագ տարածումը կարող է հասանելի լինել միայն ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:

Հրապարակումների պատրաստման համար անհրաժեշտ է ունենալ վիճակագրական տվյալների բազա և բանկ, վիճակագրական տվյալների տարածման էլեկտրոնային միջոցներից օգտվելու առավել մեծ հնարավորություն:

Իսկ այդպիսի հնարավորություն ընձեռում է Ինտերնետը, որը լայն մուտք է ապահովում դեպի վիճակագրական տվյալների «անեզր» աշխարհ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ



XXI դարը պահանջում է տեղեկատվության համակարգի զարգացում, վիճակագրության առաջանցիկ զարգացում մյուս ոլորտների համեմատ, անորոշության դաշտի նվազեցում, ինչը բնականաբար մեծացնում է տեղեկատվության նշանակությունը:

Ներքին սպառողի և միջազգային հանրության համար կարևոր է, որպեսզի վիճակագրական տեղեկատվությունը լինի գիտականորեն անկախ, ապաքաղաքական, օբյեկտիվորեն անաչառ, ապահովվի տվյալների ճշգրտության աստիճանը և արժանահավատությունը:


Վիճակագրության վերակառուցման առաջնահերթ ուղղություններից մեկը վիճակագրական տեղեկատվության տարածման փորձի և դրա վարման քաղաքականության նորացումն է ու այդ բնագավառում նոր մոտեցումների կիրառումը:

Միայն նման հետազոտությունների պարբերական անցկացումը հնարավորություն կընձեռի ժամանակի և տարածության մեջ մշտապես դիտարկել վիճակագրական տեղեկատվություն սպառողի աճող և փոփոխվող պահանջմունքները, ուսումնասիրել և հնարավորինս բավարարել դրանք:

Օգտակար է այն վիճակագրությունը, որից օգտվում են: Վիճակագրական տվյալները չեն պատրաստվում արխիվի համար: Եթե վիճակագրությունը չի հանդիսանում որոշումների ընդունման գործիք և չի օգնում հասկանալ տեղի ունեցող երևույթները, այն չի կատարում իր հիմնական գործունեությունը:

Եթե մենք չենք ճանաչում մեր սպառողներին, ապա մենք չենք հասկանա, թե նրանք բավարարված են արդյոք մեր մատուցած ծառայություններից, մենք չենք իմանա վիճակագրությունում առկա որևէ անբավարար ծառայության մասին և դժվար կլինի զարգացնել այն ուղղությունը, որը կհամապատասխանի նրանց տեղեկատվական պահանջմունքին»: Հարկ է անընդհատ հիշել, որ վիճակագրական տեղեկատվություն սպառողների տարբեր խմբերն ունեն տարբեր պահանջմունքներ և միատեսակ ծառայությունների մատուցումը բոլոր տեսանկյուններից թերի ու անբավարար կլինի: Այսպես օրինակ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մեր գործընկերներն են և նրանց անհրաժեշտ է օգնել լինելու լիարժեք տեղեկացված և տրամադրել հակիրճ տեղեկատվություն: Գործարար աշխարհի ներկայացուցիչների խումբն առավել լայն նպատակային խումբ է և նրանց հետ շփումը բարդ է, բայց օգտակար: Նրանց անհրաժեշտ է քիչ ավելի մանրամասնեցված տեղեկատվություն:

Վիճակագրական ծառայությունները կարիք ունեն գերակտիվ հաղորդակցման և արհեստավարժ դեկավարվող համակարգված մոտեցման նրանց տեղեկատվական ծառայությունների զարգացման գործում: Տեղեկատվական ծառայությունները տվյալների հավաքագրման և վիճակագրական տեղեկատվության արտադրության հետ մեկտեղ հանդիսանում են ցանկացած վիճակագրական ծառայության հիմնական գործունեություններից մեկը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ,
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ**
(ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸԻ, ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՀԱՆՁՄՈՒՆՔՆԵՐԻ,
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)



Հ Ա Ր Յ Ա Թ Ե Ր Թ

**ՀԱՐԳԵԼԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՍՊԱՌՈՂ (ՕԳՏԱԳՈՐԾՈՂ)**

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՁԵՁ Է ՀՂՈՒՄ 10 ՀԱՐՅ, ԱԿՆԿԱԼԵԼՈՎ ՍՏԱՆԱԼ ԱՆԿԵՂԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ,
ՈՐՈՆՔ ԿՆՊԱՍՏԵՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ
ԱՌԱՋԸՆԹԱՅԻՆ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ
ՄԱՏՈՒՅՄԱՆ ՈՐԱԿԻ ՀԵՏԱԳԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ Ը:

(յուրաքանչյուր հարցի դիմաց -ում, խնդրում ենք նշել այո կամ ոչ)

1. Դուք հանդիսանո՞ւմ եք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տեղեկատվության սպառող (օգտագործող)

2. Ինչպե՞ս, ո՞ր աղբյուրից եք ստանում (ձեռք բերում) վիճակագրական տեղեկատվությունը.

փոստով

էլեկտրոնային փոստով

Ինտերնետով


Հաճախելով Ծառայության գրադարան

Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում

Այլ:

3. Ձեզ բավարարո՞ւմ է արդյոք վիճակագրական հրապարակումների արտաքին տեսքը, բովանդակությունը
(խնդրում ենք տալ Ձեր պատասխանի փոքրիկ բացատրությունը՝ եթե այո՝ ինչո՞ւ, եթե ոչ՝ ինչո՞ւ)

4.Գուք օգտագործո՞ւմ եք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված վիճակագրական տեղեկատվությունը
(խնդրում ենք պատասխանել նաև այն հարցին, թե ինչպե՞ս կամ որտե՞ղ եք այն կիրառում)



5.Վիճակագրության ո՞ր մասն է (հատվածը) հատկապես Ձեզ հետաքրքրում (ընդգծել X - ուլ).



ա/ Մակրոտնտեսական ցուցանիշներ

օրինակ՝

- համախառն ներքին արդյունքի ցուցանիշ,
- արդյունաբերական արտադրանքի ծավալ,
- գյուղատնտեսության համախառն արտադրանք,
- իրականացված շինարարության ծավալ,
- արտաքին առևտրաշրջանառություն,
- մանրածախ ապրանքաշրջանառության ծավալ,
- բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալ,
- սպառողական գների ինդեքս,
- արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս և այլն

բ/ Բնապահպանություն և բնօգտագործում

օրինակ՝

- բնապահպանության ընթացիկ ծախսումներ,
- անշարժ աղբյուրներից մթնոլորտային արտանետումներ,
- բնապահպանական և բնօգտագործման վճարներ,
- արտակարգ իրավիճակներ,
- հանրապետության մետերեոլոգիական բնութագիր և այլն

գ/ Բնակչություն, ժողովրդագրություն

օրինակ՝

- բնակչության թվաքանակ,
- ծնվածների և մահացածների թվաքանակ, բնակչության բնական աճ,
- կյանքի սպասվելիք տևողություն՝ հաշվարկված ծննդից հետո,
- մանկամահացություն և մայրական մահացություն,
- ամուսնությունների և ամուսնալուծությունների քանակ,
- բնակչության միգրացիա և այլն

դ/ Սոցիալական հատված

օրինակ՝

- առողջապահական ցուցանիշներ,
- իրավախախտումներ,
- հաշմանդամ բնակչություն,
- կենսաթոշակառուներ և նշանակված կենսաթոշակների միջին չափեր,
- նախադպրոցական հաստատությունների գործունեություն,
- երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների գործունեություն,
- հետբուհական կրթություն,
- գիտատեխնիկական աշխատանքներ,

- բնակարանների և առանձնատների առուվաճառք,
- հանրապետության բնակելի ֆոնդ և այլն

ե/ Վիճակագրական մեթոդաբանություն,
 մեթատվյալներ՝ տեղեկություններ տվյալների,
 ինչպես նաև դրանց ստացման և օգտագործման վերաբերյալ
 (մեթատվյալներն անհրաժեշտ են տվյալների ստացման և օգտագործման համար)

զ/ Այլ :

6. Լրացուցիչ (ի հավելումն եղածի) ի՞նչ տեղեկատվություն կցանկանայիք տեսնել վիճակագրական հրապարակումներում (խնդրում ենք նշել):

7. Հետագայում Դուք կցանկանայի՞ք վիճակագրական տեղեկատվությունը ստանալ (ձեռք բերել).

փոստով

Էլեկտրոնային փոստով

Ինտերնետով

(ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԷՁԸ <http://www.armstat.am>)

Հանդիպումների, մամուլի ասուլիսների ընթացքում և այլն

Ծառայություն հաճախելով (այդ թվում՝ գրադարան)

Էլեկտրոնային կրիչներով

8. Եթե վիճակագրական տեղեկատվությունը (բացի անվճար երաշխավորված պետական նվազագույնից) հետագայում Ձեզ մատուցվի վճարովի հիմունքներով, Դուք այն կգնե՞ք, և/կամ ո՞ր դեպքում պատրաստ կլինեք վճարել (ընդգծել X - ով).

ա/ մինչև 10 թույլ մատուցված վիճակագրական ծառայությանը,

բ/ 10 թույլից ավելի մատուցված վիճակագրական ծառայությանը,


գ/ որոշակի ժամանակ պահանջող աշխատանքի դեպքում,

դ/ տարբեր աղբյուրներից նյութը սինթեզելու դեպքում,

ե/ ստանդարտից տարբերվող, հատուկ պատվերով աշխատանքի դեպքում:

9. Դուք կցանկանայի՞ք մասնակցել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից կազմակերպվող մամուլի ասուլիսներին, Ծառայության դահլիճում անցկացվող վիճակագրական սեմինարներին

10.Դուք կցանկանալի՞ք այսուհետև ևս լինել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող նյութերի սպառող (օգտագործող)



ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը խնդրում է Ձեզ նշել հետաքրքրող այլ հարցերի մասին, որոնց վերաբերյալ Դուք ունեք առաջարկություններ ու դիտողություններ

Շնորհակալություն համագործակցության համար

Մույն հարցաթերթը լրացնելուց հետո խնդրում ենք այն վերադարձնել ՀՀ ԱՎԾ ներկայացուցչին (տեղում լրացնելիս) կամ էլ ուղարկել ստորև ներկայացվող հասցեներով:

Հարցաթերթի հետ կապված բոլոր հետաքրքրող հարցերով կարելի է դիմել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժնին (709 սենյակ)՝ 523-356, 524-542 հեռախոսահամարներով, ինչպես նաև ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջի «Գլխավոր էջ»-ում զետեղված հարցաթերթի լրացման համար նախատեսված svod@armstat.am էլեկտրոնային փոստով:

Հասցեն՝ Երևան, 0010, Կառավարական շենք, քիվ 3:

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Թողարկման պատասխանատու՝

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության
վիճակագրական տեղեկատվության տարածման
և մարկետինգի բաժին